ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՔՍԻՏՈ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-26/98 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
20	դպրոցական կահույք-20-ի լրակազմը բաղկացած է. դասասենյակի գույքից, լաբորանտի սենյակի գույքից, հանդիսությունների դահլիճի գույքից, հանդիսությունների դահլիճին կից հանդերձարանի գույքից, տնօրենի աշխատասենյակի գույքից, ընդունարանի գույքից, վարչատնտեսական համակարգողի գույքից, փոխտնօրենի աշխատասենյակի գույքից, հաշվապահի գույքից, տնտեսվարի գույքից, հոգեբանի սենյակի գույքից, մեթոդ միավորումների սենյակ 2-րդ հարկի գույքից, ուսուցչանոցի գույքից, գրադարանի գույքից, «շախմատ» առարկայի գույքից, բուժկետի գույքից, մարզիչի սենյակի գույքից, հանդերձարանի գույքից, պահակակետի գույքից, «նախնական զինվորական պատրաստություն» առարկայի գույքից, «տեխնոլոգիա» առարկայի գույքից, «կերպարվեստ» առարկայի գույքից, որը պետք է համապատասխանի կից ներկայացված տեխնիկական առաջադրանք-20-ին: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և/կամ հավաքումը իրականացվում է Վաճառողի կողմից իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Վաճառողը պարտավոր է շտկել /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ (հեռ.՝ 010599699 (564)): Մինչև մատակարարումը ապրանքների նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Եթե մատակարարումը իրականացվում է պահեստավորման վայր, ապա Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա

	դիմաց, իսկ Վաճառողը պարտավորվում է տեղադրման ենթակա ապրանքների տեղադրումը վերջնական վայրում իրականացնել, երբ համապատասխան ապրանքները կտեղափոխվեն վերջնական վայր՝ Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում: Լոռու մարզ գ. Արևածագի Կ. Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց, հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Ալավերդի համայնք, գ. Արևածագ, 1-ին փողոց կամ պահեստավորման վայր (ք. Երևան, ՀՀ մարզեր)

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ЭКСИТО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/98 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
20	